ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<29>> փետրվարի 2016 թվականի N 14 ք.Գյումրի

ՍԵՐԳԵՅ ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ հոդվածների, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2.2-րդ կետի, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Սերգեյ Պասկևիչյանի 2016 թվականի փետրվարի 25-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետ Սերգեյ Պասկևիչյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն և 4 աշխատանքային օր ամենամյա լրացուցիչ արձակուրդները:
2. Ամենամյա արձակուրդի տևողությունը 24 աշխատանքային օր՝ 2016 թվականի մարտի 1-ից մինչև ապրիլի 4-ը ներառյալ:
3. Հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:
4. Ամենամյա արձակուրդի ընթացքում աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետ Սերգեյ Պասկևիչյանի պարտականությունների կատարումը վերապահել բաժնի գլխավոր մասնագետի Մուշեղ Մուրադյանին:

Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է